

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

«Էֆլորնիթին-արմենիկում դեղորայքային համադրության ազդեցությունը վերքային բորբոքային պրոցեսի վրա» թեմայով Հովհաննես Վաչագանի Ղազարյանի ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության հիման վրա

Աշխատանքը նվիրված է բժշկագիտության կարևորագույն ուղղություններից մեկին՝ վերքային բորբոքային գործընթացի բազմակողմանի հետազոտությանը: Տասնամյակներ շարունակ բժշկական պրակտիկայում վերքերի բուժման նպատակով լայնորեն կիրառվել են մի շարք դեղամիջոցներ, որոնք, օժտված լինելով օրգանիզմի իմուն համակարգի պաշտպանական գործունեության ակտիվացմամբ, հակաբորբոքային, հակամանրէային, ցավազրկող, վնասված հյուսվածքի վերականգնողական ֆունկցիան խթանող հատկություններով՝ հաջողությամբ օգտագործվել են տարբեր հիվանդությունների դեպքում:

Վերքերի բուժման խնդրին նվիրված փորձարարական և կլինիկական լայնածավալ աշխատություններ կան, սակայն վերքերի հնարավորինս արագ ապաքինմանն ուղղված նորանոր արդյունավետ մեթոդների փնտրտուքը շարունակվում է: Եվ այդ արդյունավետ մեթոդների մշակմանն ու ներդրմանն է ուղղված ներկայիս աշխատությունը:

Հեղինակին հաջողվել է ստեղծել առավել կատարելագործված դեղորայքային կոմպոզիցիա՝ Էֆլորնիթին-արմենիկում՝ դիֆտորմեթիլօրնիտինային հիմքով, իսկ նախկինում փորձը ցույց էր տվել, որ վերջինս ունեցել է տեսական, սակայն ոչ գործնական արդունավետ կիրառություն: Նոր ստեղծված պրեպարատի արդյունավետությունը հիմնված է մանրէների կողմից պոլիամինների սինթեզի ընկճման ունակության վրա, որը հաստատվել է ֆարմակոկինետիկ և մորֆոֆունկցիոնալ վերլուծությունների միջոցով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ աշխատանքում տեղ են գտել նաև մորֆոմետրիկ հետազոտություններ, որոնք մեծացնում են աշխատանքի արդյունքների հավաստիությունն ու արժանահավատությունը:

Աշխատանքում ներկայացված են մի շարք կարևոր դրույթներ: Մասնավորապես՝ որոշվել են բորբոքային էքսուդատում բջջային տարրերի ձևաբանական

փոփոխությունների դինամիկան, ինչպես նաև արձանագրվել է ֆագոցիտոզի ակտիվացման խթանում ստեղծված դեղորայքի ազդեցությամբ, ինչը կարևոր դրական հատկանիշ է, քանի որ անավարտ ֆագոցիտոզը բորբոքման քրոնիզացիայի արտահայտություն է:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ստեղծված դեղամիջոցը նպաստում է ֆիբրոնեկտինի սինթեզի խթանմանը, իսկ ինչպես հայտնի է, վերջինս միջբջջային մատրիքսի կազմում է, հետևաբար նրա աճի խթանումը կարևոր հանգամանք է բորբոքման պրոլիֆերացիայի փուլում ռեպարացիայի գործընթացների պատշաճ ապահովման համար: Այս բաժնում ներառված ֆյուտրեսցենտ նիշակիր հետազոտության մեթոդները խիստ յուրահատուկ և նուրբ հետազոտության մեթոդներ են, որնց կիրառումը ապահովում է ստացված տվյալների առավելագույն ճշգրտություն:

Հայտնի է, որ վերքերի ապաքինման գործընթացի արդյունավետությունը տարբեր է՝ կախված օրգանիզմի իմունային համակարգի վիճակից, մանրէային ծանրաբեռնվածությունից և նրանց տրանսլոկացիայից, շրջապատի էկոլոգիական գործոնների ազդեցությունից: Ժամանակակից աշխարհում բազմաթիվ են այնպիսի իրավիճակները, երբ մանրէների առկայությունն օրգանիզմում պայմանավորում է պերմանենտ իմունառեակտիվ վիճակ՝ ընդգրկելով իմունային համակարգի օրգանները և արտահայտվելով ավշային հյուսվածքի հիպերպլազիայով, որը երբեմն սխալմամբ կարող է դիտարկվել իբրև հիվանդություն, սակայն դա օրգանիզմի պաշտպանական ռեակցիան է՝ ընդդեմ վարակի:

Դեղագիտության տարեցտարի զարգացմանը զուգընթաց մանրէները ևս «խորամանկ» փոխակերպումներ են ձևավորում և անհասանելի դառնում դեղորայքային ազդեցությանը: Նրանք բակտերիային համակեցություններ ստեղծելով էլ ավելի են ուժգնացնում իրենց թունային ազդեցությունը: Սա ևս հակաբակտերիալ թերապիայի նվազ արդյունավետության պատճառներից է:

Ժամանակակից աշխարհում կենսահավելումների անհարկի կիրառությունը, խաթարված էկոլոգիան բացասաբար են անդրադառնում մարդու հորմոնալ և իմունային հոմեոստազի վրա: Այստեղ կարևոր է նաև հակաբիոտիկների չարաշահման խնդիրը, որը ևս նախապայմաններ է ստեղծում անտիբիոտիկակակայուն շտամմների ձևավորման և բորբոքային գործընթացի քրոնիզացիայի համար:

Աշխատանքում մշակված է հետաքրքիր մոտեցում՝ ախտածին մանրէների մետաբոլիզմը խանգարելու ճանապարհով ստանալ էֆեկտ՝ նրանց աճն ու զարգացումը արգելափակելու ճանապարհով:

Ատենափոսությունը կազմված է համակարգչային տեքստի 148 էջից, և ունի հետևյալ կառուցվածքը՝ ներածություն, գրականության վերլուծական տեսություն, նյութեր և մեթոդներ, սեփական հետազոտությունների 3 գլուխ, եզրակացություններ,

գործնական առաջարկություններ, գրականության ցանկ, որն ընդգրկում է 202 աղբյուր: Աշխատանքում ներառված են 24 որակյալ միկրոլուսանկար և 13 գծապատկեր:

Հետազոտության նյութերն ու մեթոդները բավարար են վիճակագրական վերլուծություններ ու եզրակացություններ անելու համար: Ուսումնասիրման նյութի բաշխումն ըստ խմբերի կատարված է տրամաբանորեն, ինչը թույլ է տվել հեղինակին կատարել հավաստի եզրահանգումներ: Ընդգրկված մեթոդները՝ ձևաբանական, մորֆոֆունկցիոնալ, իմունաձևաբանական, բակտերիոսկոպիական, ֆարմակոկինետիկական, բխում են աշխատանքում առաջադրված խնդիրներից:

Բարձր գնահատելով աշխատանքի գիտագործնական և մեթոդաբանական նշանակությունը, այնուամենայնիվ, անհրաժեշտություն եմ համարում նշել մի քանի առաջարկություններ, որոնք շտկելի են և էապես չեն անդրադառնում աշխատանքների արժանիքների վրա:

1. Կարծում եմ, որ որշ միկրոլուսանկարներում արժեք նաև ցուցադրել կից պատկերներ մանրադիտակի մեծ խոշորացմամբ (օրինակ՝ իմմերսիայով), հատկապես, որ նրանցում ներկայացվում են ներքջային դիստրոֆիկ փոփոխությունները (նկար 7-A), ինչպես նաև մանրէ-բջջային փոխհարաբերությունները այլ միկրոլուսանկարներում:

2. Հեղինակը նկարագրել է վերջային բորբոքման դաշտում անգիոգենեզի առանձնահատկությունները էֆլորնիթին-արմենիկումի ազդեցության ներքո: Սակայն ցանկալի կլիներ առավել մանրակրկիտ վերլուծությամբ ներկայացվեր անոթների ռեմոդելավորման առանձնահատկությունները հսկիչ և փորձնական խմբերում՝ համամատական վերլուծությամբ, ինչպես նաև՝ նաև կցել միկրոլուսանկարներ այս առիթով:

3. Ստեղծված նոր կոմբինացված դեղորայքի առավելություններից մեկը ֆագոցիտոզի խթանումն է, որը բավականին հետաքրքիր մեկնաբանվում է աշխատանքում: Հարց է ծագում՝ մորֆոլոգիական հետազոտությունների արդյունքում որքանով է տեղ գտել անավարտ ֆագոցիտոզի երևույթը, ինչպես է այն արտահայտվել հսկիչ և փորձնական խմբերում, և հատկապես որ մանրէներն են էնդոցիտոբիոզի պատճառ դարձել:

4. Մորֆոֆունկցիոնալ հետազոտությունների բաժնում ցանկալի է առավել մանրամասնել դիսցիրկուլատոր խանգարումների խնդիրը հսկիչ և փորձնական խմբերում:

Ընդհանուր առմամբ աշխատանքը ձևակերպված է բավականին գրագետ, հստակ շեշտադրումներով և տրամաբանական հանգուցալուծումներով:

Կարծում եմ, որ ներկայացված է բավականին հետաքրքիր աշխատանք, որն ունի կարևոր գիտագործնական նշանակություն, և կարող է համարվել մանրէային վարակային պրոցեսների բուժման մեթոդները, նպաստել վերքերի ապաքինման

արդյունավետության բարձրացմանն ուղղված նորագույն մեթոդների մշակմանն ու ներդրմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով Հովհաննես Վաչագանի Ղազարյանի «Էֆլորնիթին-արմենիկում դեղորայքային համադրության ազդեցությունը վերքային բորբոքային պրոցեսի վրա» թեմայով ատենախոսության արդիականությունը, նպատակը և խնդիրները, կարևոր տեսական և գործնական նշանակությունը, պետք է նշեմ, որ այն լիարժեք և ավարտուն աշխատություն է, արդիական է իր գիտական ուղղվածությամբ, գիտագործնական մեծ արժեք է ներկայացնում, և լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների նկատմամբ ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Սարիբեկյան միջազգային բժշկական
համալսարանի դասախոս,
բժշկական գիտությունների դոկտոր,
դոցենտ



Ս.Վ. Համբարձումյան

Բժշկական գիտությունների դոկտոր
Ս.Վ. Համբարձումյանի ստորագրությունը
հաստատում եմ

Սարիբեկյան միջազգային բժշկական
համալսարանի ռեկտոր, կենսաբանական
գիտությունների թեկնածու՝



Ն.Խ. Սարիբեկյան

30.06.2026 թ.